2 (99). ՊԱՌՎՈՒ ԽՈՐԱԳԵՏ ՏՂԵՆ

Կէղի չէղի, մեկ պառավ կէղի։ Էդ պառվուն իսկի տղա չէղի։ Օր մի օրերուց, բոշեմ գիկա, պառվին կասա.

— Գինամ, տղա չունիս, աման մի էրուաղեմա ցորեն լից վառման Թունդիր։

Պառավն ա, վառելու դախ աման մի էրուաղեմա ցորեն կրլնա Թունդիր։

Ցորեն հ'ըմեն կէղնի ճիժ, դելնին պառվու չորս բոլոր կը վրժ-վրժան։ Մեկ բուճ կուզա, մեկ՝ շապիկ, մեկ՝ Թունպան, մեկել՝ արախճին, մեկ լե՝ քոլող, էն մեկել լե՝ հաց ու մաց։ Հ'ըմեն մեկ բան կուզա։ Պառվի դլոխ կը տանին խժբժալեն։

Պառավ լե էդոնց վրեն կը հերսոտի, կասա.— Չոռ, չոռ, հուշիկ ձեն հանեք։

Մեկ լե էդ խոսքի վրեն պառավ կը դառնա, կաչքա, ո՛նչ ճիժ կա, ո՛նչ բան։

Պառավ զուր չոռ ըսել կը փոշմնի, հըմա՝ նա՛ ֆայդա[1], էլ ձեռնեն գնաց, նստավ գիլեր։

Դու մը սի, էդ տղեկներուց մեկ փախե, մդե Թունդրա հ'ակ, պառավ օր կիլեր, տղեն հ'ակից ձեն տվեց։

— Նանե՛, մի լա, ես հ'ուտա իմ։

Պառավ ուրխըցավ, վազեց, տղեն Թունդրից հանեց, հ'երեսներ պագեց։

Էդ տղեն մեծըցավ։

Մեկ օր էդոնց դրկեցներու աղշկներ կէրտան Սիպանա սար բանջրի։ Էդ տղեն լե գիգա ուր ջոջո մոտից քյանիմ՝ խաց կառի, գունդ մ'էլ կարագ կը փաթա մեջ, կէրտա խասի էդ աղշկներուն, կէրտան բանջրի։

---

1 Ինչ օգուտ (Ծ. Բ.)։

Կէրտան Սիպնա պաղ աղբրներուն մեկի վրեն կը նստին, հաց կուտին։

Էդ տղեն կը հանա զուր հաց ու կարագ կը գնա աղջկներու հ՚առեջ, հ՚իբար հետ կուտին, գելնին բանջար կը քաղին։

Հ՚իրկվան օր կը դառնան դեմի տուն, էդ տղեն կասա.

— Աղջկնե՛ր, յա զիս դորեզդոր կը ջալկիք, յա ձեր փորեր կը պատռիմ, զիմ կարագ կը հանիմ։

Աղջիկներ վախեցան էդ տղի մոտից։ Դորեզդոր ջալկին, էկան։

Կես գիշեր էղավ, չկըրցան հասեին գեղ, գացին էդ տեղ մոտիկ ծակ մի կեր, մտան էդ տեղ։

Լուսու դեմ տեսան օր դև մի էն դեխեն հ՚ելավ, դեմ ուրինց։

Էկավ, քոմեց առավ հ՚ըմեն հ՚իրար հետ, տարավ ուր տուն։

Տարավ, յոթ ութ օր պախեց, օր ղլավնան, ուտա։

Մեկ օր էտ պառվու տղեն ասաց.

—Ա՜խ, ա՜խ, օր իմ ջոջոն դաս էղեր, մկա կառեր ալըմաղ, կէրտեր Սիպնա գլխից ջուր կը բերեր, կը մաղեր վըր մեզի օր շուտ խըլավնանք։

Դև ավըրոցավ, հ՚ելավ, առավ զալըմաղ, գընաց Սիպնա գլոխ, օր ջուր բերա։

Էդ տղեն առավ աղջկներ, փախավ բերեց ուրանց գեղ։ Ինք էլ՝ դարձավ գնաց դևի մոտ

Գնաց հ՚ելավ դևի հ՚երդիս։ Իջկաց, դև նստե հաց կը թխա։ Հ՚երդիսեն հող կը թափա դևի գլխու վրեն։

Դև գիտցավ մուկն ա հ՚եոդսից հող կը թափա։

Ասաց.— Է, մկան լակոտ, էդ վի՞ր վրեն ա հող կը թափիս։

Ասաց ու հ՚ելավ վազեց հ՚երդիս։

Տեսավ՝ էն տղեն ա։ Կարեց, յարեց բռնեց։ Բերեց մտուց նղշուն ջվլի մեջ, բերան կարեց, գնաց ղսեն մեծ մերքուտ[1] բերա, էդ տղեն ջվլի մեջ ծեծա։

Հարի էդ դև գնաց, տղեն հանեց ուր ջեբից դանակ, ջվալ ճղեց, դուս հ՚ելավ, գնաց դևի բալաք հորթիկ բերեց, զուր տեղ մտուց ջվալ։

Դև էկավ, քանիմ՝ հատ մերքուտ զարկեց ջվլին, հորթ բոռաց, դև կասա.

— Մանրի, օր ուտեմ քզի՝

Դև կը բանա ջվլի բերան օր ուր բալաք հորթն ա, կսկծու կը պատռի։

Էդ տղեն գելի դևի խազինեն ու դավինեն զմեն կառի, գիգա պառվու տուն։

---

[1] Սանդի ծեծ (Ս. Բ.)։